կնանիքների և մայրերի։ Ես երկար չեմ խօսիլ այս տեղ այն բարերար ներգործութեանց վերայ, որ ունենում լուսաւորեալ կինը տնային կեանքի մէջ. կասեմ միայն իմ կարողութեանս համեմատ մի քանի խօսք կնոջ միւս կողմի նշանակութեան վերայ՝ իբրև մօր գերդաստանի։

Ո՞ւմ՝ եթէ ոչ նորա է պատկանում դնել առաջին հիմքերը բարոյական ընաւորութեան դաւակի։ Ո՞վ կարող է երեխային սիրել մօրից աւելի, ուրեմն ո՞վ կարող է երեխայի վերայ առաւել ազդեցութիւն և հոգատարութիւն ունենալ քան թէ մայրը։ Իսկ սիրող և բարեացակամ լինելոյ համար հարկաւոր է օրինաւոր կերպով կրթել մարդոյ սիրտը։ Ի՞նչքան մեծ նշանակութիւն ունի խելացի ու կանոնաւոր ձևով ճանապարհ ցոյց տալ երեխային կեանքի մէջ՝ հասկացնելով նմա գլխաւոր տեղեկութիւններ հաւատոյ վերայ, բարոյականութեան և պարտաւորութեան իմաստուն և կրթեալ մարդոյ։

Իւրաքանչիւր լուսաւորեալ մայր ընծայելով Հասարակութեան նոյնպիսի քաղաքացիներ՝ անտեսանելի կերպով անգին օգուտ է բերում իւր սիրելի Հայրենիքին։

Բարեկիրթ մայրը՝ տնկելով երեխայի մատաղահասակ և ընդունակ հոգւոյ մէջ բարոյականութեան և հաւատոյ սկիզբները, Ի՞նչքան մարդ կ'աղատէ գլորմանից դժուար և սայթաքող ասպարիզում (մարդոյ) կեանքի։

Տեսէ՛ք ձեր չորս կողմն. ամենայն տեղ կանանց սեռի կրթութեան հարցը հանապազօրեայ հոգացողութիւն է դարձել։ Այդ գործին մասնակից են լինում, որպէս թագաւորազունք, նոյնպէս և ազքատիք քաղաքացիները, —ժողովրդի գործակատարութիւնը անպատճառ հարկաւոր է այդ բանում։

Ուրեմն և մեք՝ Ողորմած Պարոնայ՛ք, յանուն այդպիսի սուրբ ու նուիրական գործոց, որպէս այսօրվայ հանդէսն է, միաւորվինք միմեանց հետ հոգւով, մի կողմն դնենք բոլոր անձնական շահախնդրութիւնները, սկսենք ամեններս մեր կարողութեան չափ օգնել յաջողութեան և յառաջդիմացութեան այս Ուսումնարանիս, այնպէս որ այս հանդէսը, որ տեսանում ենք ահա այսօր, և որ առաջին անգամն է պատահում Աստրախանում, կրկնուի Ուսումնարանի դարեդարձի օրը ուրախութեան պտուղներ հատուցանելով։ Հաւատացէ՛ք հաստատ, որ մեր գալոց սերունդը երախտագիտութեամբ կը յիշէ այն մարդիկներին, որոնք եղել են սկզբնապատճառ օրիորդաց Ուսումնարան բանալոյ։

Դառնալով դէպ ի Ձեզ՝ սիրելի և քաղցրիկ աշակերտուհիք, աղաչումեմ աշխատէ՛ք արդարացնել այն յոյսերը, որ ունենք Ձեր վերայ, մտադրութեամբ լսէ՛ք և կատարեցէ՛ք ինչ որ Ձեզ կաւանդեն Ձեր Խնամակալները և Ուսուցիչները, այնպէս որ ժամանակին պատրաստ ունենաք ամենը՝ ինչ որ վայելէ բարեկիրթ մարդոյ. որով և արժանի կլինիք կոչուիլ" իմաստուն Կուսանք"։

Ե. Դաղաշեանց։

Խմբագրական Աղաղակ Ամսագրոյ

«Զափազանց սաստկութիւնը տանելութիւն կը ծնի»։

Անցեալ Ապրիլի Արարատ ամսաթերթում ես էլ կարդացի տեղեկութիւն Աղէքսանդրապոլու Հոգևոր Ուսումնարանի մասին, Ցիշեալ յօդուածի մէջ Նամակագիրը շտապել է հաղորդել, թէ Նորոգութեան ձեռնարկող վերատեսչաց ժողովը միմիայն Նոր Տեսուչ է նշանակել նշանաւոր ոռճկով և այլ ոչինչ։ Բայց աւելի հետաքրքրելին այս է, որ Նամակագիրը բոլորովին չէ անգործացուցեր ժողովը, ընդհակառակը նա ուրախութեամբ խրախուսում է ժողովին, որ միտք դարձնէ ուսուցիչներու անկանոն դասատուութեանը և դ ՀՈՌՈՒ ՈՒՆՈՒՆ ԳԻՆՈՒՆԸ. ՈՐԸ ՀԱՐԿԵՐԻՆԻ ՓԻԼՈՍՈՓՈՒՆԻՆ ԷԼԻՈՍՈՒՆԻԱՆ Դ ԴԵՌ ՄԻՆ է։ Բարձր արտասանութիւն. բայց . . . . . Այս լուրը խանդարեց մեր յոյսը, թէ Հոդարարձուք պիտոյ է բարւոքեն ուսումնարանը և պէտք է խանդարէ Հանդարդ աշխատանքը ժողովի, որոյ գործի վախճանը չ'տեսած Նամակագիրը տղայաբար շտապել է հաղորդել, թէ ոչինչ չեն լինելու, այնպէս՝ որ կարծես թէ կամենում է հրաժարել բոլորին և

ինքը լինել գործին ղեկավար. Ցանկալով իմանալ այս գրուածքի միտքը, ես ոչինչ չ'հասկացայ. եթէ ոչ միայն Հայկազեանին յայտնի եղած առեղութիւնը դէպի ուսուցիչների մէկը, առեղութիւն, որ զրդել է Հայկազեանին խրախոյս տալ ժողովին, որ նա շուտով ճանապարհ տայ աշակերտներին զիտակցութիւնից զրկող ուսուցչին. նա կարելի է. ցանկալով ճշմարտասիրութիւն գործել, չէ կամեցել, որ մեք զուր տեղը ուրախանանք Հոգաբարձուաց գործունէութեան վերայ. բայց չէ. նորա գործը իւր վարժապետի հետ է. նա գրում թէ. ուսուցիչը աշակերտներին անձնագիտակցութիւնից զրկում. Զեմ գիտում թէ ի՞նչպէս կարող է մէկը միւսին անձնագիտակցութիւնից զրկել առանց այնպիսի բռնաբարութեան, որը որ քրէական օրէնքով կ'դատապարտուի. կամ՝ ի՞նչպէս է եղել, որ այսքան տարուայ յանցաւոր ուսուցչութեան վարքը անհետաձիգ է մնացել ուսուցիչ վարձող Տեսուչներից. Անձնագիտակցութիւնը ընդարձակ զգացմունք է. ուսուցիչը կարող է չ'արգացնել նորան, բայց ոչ բնական եղածը էլ խլել կամ զրկել, ինչպէս վկայում Պ. Նամակագիրը. Ցիշելով թէ այս Հայկազեանի գրած անձնագիտակցութիւնը թարգմանութեան կարօտ է, ես կարծումեմ, թէ կրկին ոչինչ չ'պէտք է հասկանամ, եթէ թարգմանողը լինի նոյն ինքն հեղինակը.

Եթէ ժողովը մի կարևոր առաջարկութիւն է արել, ինչպէս գրում Պ. Հայկազեանը, ուրեմն նա շինել է գործ և ոչ ոչինչ, որին դարձեալ վկայէ ծածուկ թշնամութեամբ խօսող նամակագիրը. Պարոնի միտքը եղել է առաջինը. հոչակել իւր գողացած ազգանունը զրականական վատաբուվան զի նա "անձնագիտակցական" խօսքով ոչ ոչ ինչ չէ յայտնում. եթէ ոչ ցոյց կ'տայ իւրեան ինչպէս նոր մտքի տէր անձն. բայց ես յիշած եմ, թէ նորա նամակը ոչ հին և ոչ նոր միտք կամ նպատակ չունի. այս գրուածքը կ'համարուի հեռագիր՝ որն որ տեղիք ունի քաղաքական լրագիրների մէջ. և երկրորդն՝ զեռ միտքը պահելով այն սաստիկ վարքը կամ ծեծը, որը վայելել է ուսումնարանում, նա հիմայ, ինչպէս ազատ խորհող և բարձրանուն "Հայկազեան" անձն, վրէժխնդրութեամբ սպառազինուել է իւր ուսուցչի դէմը. բայց՝ ինչպէս ինքը կարծումէ, ոչ թէ առանց անձնագիտակցութեան, այլ կատարեալ անձնագիտակցութեամբ և նորան քարոզող զլխով. Զարմանալի է նամակագրի ձիրքը, որ կարողացել է այնպիսի մի ուսուցչի ձեռքից, ինչպէս ինքը պատմումէ, անձնագիտակցութեամբ դուրս պրծնել. բայց այս զարմանքը միայն հեռաւորների համար է և ոչ նոցա, որոնց զլխաւորապէս հարկաւոր է նորա նամակը կարդալ, կամ որոնք ծանօթ են պարոնի հետ՝ որովհետև մեզ ամենիս յայտնի է. որ նա իւր գրածը չէ հասկացել՝ բայց ի՞նչ անես, որ դորանով կարող է վշտացնել այն մարդու սիրտը, որը իրաւունք ունենալով երախտագիտութեան սպասել, Յուդայի գործ կ'տեսնէ իւր աշակերտի վերայ.

Ես կամենումեմ յայտնել, թէ ի՞նչքան կարող է անձնագիտակցութիւնը ուրացնել տալ այն ուսուցիչը, որը միայն հրամանակատար լինելով վերատեսուչների կարգադրութեանը՝ պատրաստ է եղել ամէն հեշտ ըմբռնելի կրթութեան ձևերին փոխուել, և որը որ առանց վերատեսուչների բարեհաճութեանը ոչինչ չէ ուսուցել. ուրեմն, եթէ վերատեսուչներն համաձայնել են թողտուել ուսման մէջ այնպիսի կանոն, որով աշակերտները անձնագիտակցութիւնից զրկուումեն, այդ մեղքի առաջի պատասխանատուքը վերատեսուչները են. ըստ որում ուսուցչի սխալը մի անձի, իսկ վերատեսուչներինը՝ շատ անձի. Եթէ վերատեսուչները սխալել են, ուրեմն նորա չեն հասկացել. եթէ նորա չեն հասկացել, ուրեմն նոցա ընտրող անձինքն էլ չեն հասկացել. թէ ի՞նչ մարդիք ընտրումեն այդ ամենահարկաւոր գործի մէջ. Սորանից դուրս է գալիս. որ բայց Պ. Հայկազեանից, մեր երկրումը ոչ ոք չէ հասկացած եղել, թէ ուսուցիչը անձնագիտակցութիւն կ'ունէ.

Զեմ արդարացնում այն սաստիկ կրթութիւնը, որը մեք ունեցել ենք ոչ միայն ուսումնարանի մէջ, այլ և ամէն տեղ. մի՞թէ տանը մէջ սեանը չեն կապել մեզ և այլն. բայց այս ամենը պարագայ էր և պատանումեր անցեալ ժամանակին՝ և ոչ չարարարքութիւն էր անհատի. ուրեմն պէտ բոլորի դէմը, ի՞նչ արդարութիւն է մէկին դատել. Բարի

մարդը միաքը կ'պահէ ո՛չ լարը՝ այլ բարին. և որովհետև Պ. Հայկազեանը սառնարիւն և պարզ էէպի իւր պատմած անձը, վասնորոյ Նորան օրէնք չէ պատմիչ լինել իւր կիրքը բաւականացնելու համար. թո՛ղ ուրեմն իւսի ուսուցչի համար՝ նա՝ ոչ որ դէպի նա անաչառ է, և ո՛չ այն՝ որ ոչ պատմիչ՝ այլ մատնիչ կամ դահիճ է իւր պատմած անձի յարգելի անուանը. Եթէ մեզանից անձնազիտակցութիւնը, Հայկազեանի կարծիքով, բարձուած է, առաջի մեղաւորը մեր հայրերը են, որոնց առաջի խնդիրը, մեզ ուսուցչին յանձնելիս, այս էր լինում, թէ "դու գիտես, վարժապե՛տ, տղես հիմի էլ իմն չէ, քուկդ է, դու գիտես, կաշին քեզի, օսկորը ինձի". Ես սորանով կամենում եմ հասկացնել թէ՝ ինչպէս ձևը ուսման, նոյնպէս Նորա չափը, ինչի ուսուցանելը և ինչպէս մեզ հետ վարուիլը, ուսուցիչը գործումէր համաձայն մեր հայրերի կամքին. և եթէ Նոցա չ'լսէր, Նա կ'ազատուէր վարժապետութիւնից և աշակերտներից, Նորա համար որ ասումէին " շատ երես կուտայ, կարդացնել չի գիտեր". Ես կարծումեմ, որ պարոն Հայկազեանի, անձնազիտակցութեան մասին՝ ունեցած նախապաշարմունքը ծնծից պէտք է յառաջացած լինի և այն ևս այնպիսի ծնծից, որից կարողացել է խնչադարուել. վասն զի քանի խնչադար չենք, անձնազիտակ ենք. Պ. Հայկազեանը միայն իւրեան գրուածքովը կարողացել է ցոյց տալ, թէ անձնազիտակցութիւնը ի՞նչ է, ըստ որում գրել է այն, ինչ որ չէ հասկացել. ուրեմն Նա անձնազիտակցաբար չէ վարուել իւր գործի մէջ.

(Ն-ՅԵՆ Ի ԽԵՐ-ԲԻ-Յ-)

ՍՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ

Ցանկալի է և ինձ երախտագիտական պարտաւորութեամբ՝ տեղւոյս ուսումնարանի հանգամանաց մասին՝ իսկապէս խօսելով, տարփողել 'ի սիրոս ազգայնոց. և որոյ համար ինչպէս անցեալ ապրիլի ամսաթերթով ընթերցանք Պ. Արամեանցի հաղորդած պատուական գրութիւնը, որ ըստ բաւականին ուղղապէս կ'բարբառէր՝ նոյն ուսումնարանի հմնազիր պարոն Բաղդասարայ Տէր Բաղդասարեանցի աղգաշահ և ամենանախանձելի գործը. որ յիրաւի Նորա սեփհականութիւնից է հիմնուած տեղւոյս դպրոց. և Նորա թէ աւետարանի և թէ անձնական արդեամբ կը կառավարի. և ոչ միայն սորանով Տէր Բաղդասարեանցի անուան անմահութիւն կ'պանծայ 'ի թիւս ազգասիրաց, այլ և որ բազմաթիւ Հտարիներով հաւատարիմ և արդիւնաւէտ ծառայութիւն ցոյց տուած է տեղւոյս սուրբ եկեղեցւոյն, և՞ զրեթէ իւր անձնական յիշատակներով զարդարել է եկեղեցին, մանաւանդ ուրիշ ուրիշ ամենահարկաւոր պիտոյից մասին միշտ ջանք է անում, աւելի ևս դպրոցի պայծառութեան և յառաջադիմութեան. Նմանապէս Նորա որդի Պ. Ղազարն ուսումնարանի զարգացման դէպ 'ի յառաջադիմութիւն՝ և կարևոր պիտոյից համար քաջ ջանադիր է. որ և ինքն անցեալ թուականին՝ գլխաւոր Հոգաբարձութեան պաշտօնին ընտրուած է միւս հոգաբարձուների հետ, և յառաջարկուած են 'ի հաստատութիւն. Այս խոհեմազարդ և ուսումնասէր պատանին Պ. Ղազարն Տէր Բաղդասարեանց խոստացել է, որ իւր ներկայ տարեկան աշխատութիւնից տասանորդական բաժին հանէ ուսումնարանին. սորանով այո՛ այն պարոնը՞ յաւէրժական յիշատակարաններումը իւր ազգասիրութեան եռանդն անջնջելի կ'դրոշմէ, և ազնիւ զգացմամբ շարժառիթ կ'լինի ազգայնոց ձգտիլ դէպ 'ի բարոյական և ուսումնական յառաջադիմութիւնն. սոցա այս ազգասիրութեան ամենարարի նախանձն, որ բորբոքեց իւրեանց հոգիքն 'ի սէր ազգին, այո՛, յաւիտենական կ'պահէ իւր անմահութիւնն, և կը զարթնացնէ շատերին մահահրաւէր քնից.

Այս դպրոցի մէջ քանի ժամանակ մեք ևս կեանք անցուցած ենք ուսման պարապելով, բայց աւա՜ղ "և ես ասում եմ հազար անգամ, որ եթէ այն խուչնդոտ առիթներին պատահած չլինէր, կարող եմ ասել, թէ տեղւոյս մանկտին ևս մի կենսաւէտ բուրաստանի ծաղիկների նման՝ ազգասիրութեան ընդարձակ ասպարիզի մէջ իրրև մի պիտանացու անդամ կ'հանդիսանային. բայց ափսո՜ս որ այն բարի գործոց դէմն հակառակու-